«Էնդոդոնտիայի առանձնահատկությունները»

2023 թվականից կրկնողաբար Երևան քաղաքում «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից կանցկացվի «Էնդոդոնտիայի առանձնահատկությունները» թեմայով դասընթաց: Ծրագիրը հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով: Թիրախային լսարանը՝ բժիշկ-ստոմատոլոգներ: Մասնակիցներին կշնորհվի ՇՄԶ 13 տեսական և 12 գործնական կրեդիտ: Լրացուցիչ տեղեկատվության համար զանգահարել 010583101 հեռախոսահամարով:

**ԾՐԱԳԻՐ**

**«ԷՆԴՈԴՈՆՏԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ**

2023 թ.-ից կրկնողաբար, ք. Երևան («ԱԿՌԱ» ստոմատոլոգիական կենտրոն)

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամ

| Օր 1 | | |
|---|---|---|
| 15:00-17:30 | **Դասախոսություն**<br>Գործիքների ընտրությունը ամենօրյա պրակտիկայում: Ձեռքի գործիքներ, պողպատյա և NiTi գործիքների համեմատական վերլուծությունը, ընտրության սկզբունքները: Պացիենտի զննում, հետազոտման նորագույն մեթոդների կիրառմամբ: Էնդոդոնտիկ ծայրակալների և նրանց հետ կիրառվող ֆայլերի ընդհանուր բնութագիրը, նրանցով աշխատելու սկզբունքները:<br>Աշխատանքային երկարության որոշման մեթոդները: Արմատազգաթի անատոմիա | Գագիկ խաչատրյան/ Հրաչյա Սահակյան |
| 17:30-18:30 | Ընդմիջում | |
| 18:30-21:00 | **Գործնական աշխատանք** | Գագիկ խաչատրյան/ Հրաչյա Սահակյան |
| Օր 2 | | |
| 10:00-12:30 | **Դասախոսություն**<br>Իրիգացիոն մեթոդները էնդոդոնտիկ միջամտության ժամանակ: Իրիգացիոն լուծույթների ամբողջական բնութագիրը, վերլուծումը, կիրառման սկզբունքները:<br>Քսման շերտ, կառուցվածքը, հեռացման անհրաժեշտությունը:<br>Ձայնային և ուլտրաձայնային մեթոդների կիրառումը էնդոդոնտիայում | Գագիկ խաչատրյան/ Հրաչյա Սահակյան |
| 12:30-13:30 | Ընդմիջում | |

| | | |
|---|---|---|
| 13:30-16:00 | **Գործնական աշխատանք** | Գագիկ խաչատրյան/<br>Հրաչյա Սահակյան |
| Օր 3 | | |
| 15:00-17:30 | **Դասախոսություն**<br>Արմատախողովակների գործիքավորման ժամանակակից մեթոդները<br>ա. Ստանդարտ մշակում<br>բ. Step-back/քայլ դեպի հետ եղանակ<br>գ. Crown-down/պսակ-գագաթային եղանակ<br>դ. Բալանսավորված ուժի կիրառում | Գագիկ խաչատրյան/<br>Հրաչյա Սահակյան |
| 17:30-18:30 | Ընդմիջում | |
| 18:30-21:00 | **Գործնական աշխատանք** | Գագիկ խաչատրյան/<br>Հրաչյա Սահակյան |
| Օր 4 | | |
| 10:00-12:30 | **Դասախոսություն**<br>Արմատախողովակների օբտուրացման ժամանակակից մեթոդները.<br>ա. Լատերալ կոմպակցիա - ինչու՞ ոչ կոնդենսացիա, սպրեդերների և սիլերների ընտրությունը<br>բ. Վերտիկալ կոնդենսացիա, մեթոդների վերլուծություն, սիլերների ընտրություն<br>գ. Գուտապերչա կրիչով. Thermafil<br>դ. Կոմբինացված մեթոդ | Գագիկ խաչատրյան/<br>Հրաչյա Սահակյան |
| 12:30-13:30 | Ընդմիջում | |
| 13:30-16:00 | **Գործնական աշխատանք** | Գագիկ խաչատրյան/<br>Հրաչյա Սահակյան |
| Օր 5 | | |
| 15:00-17:30 | **Դասախոսություն**<br>Սխալները և բարդությունները պրակտիկ էնդոդոնտիայում և դրանց շտկման եղանակները.<br>ա. Արմատի ուղղահայաց կոտրվածք<br>բ. Արմատի թափածակում<br>գ. Գործիքի կոտրում<br>դ. Սիլերների և ֆիլերների արտահրում հարգագաթային հյուսվածքներ<br>ե. Արմատախողովակի թերլցավորում | Գագիկ խաչատրյան/<br>Հրաչյա Սահակյան |
| 17:30-18:30 | Ընդմիջում | |
| 18:30-21:00 | **Գործնական աշխատանք** | Գագիկ խաչատրյան/<br>Հրաչյա Սահակյան |

Թիրախային լսարան՝ բժիշկ-ստոմատոլոգներ:
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-10 հոգի:

*Դասախոսության յուրաքանչյուր թեմայի համապատասխան, մասնակիցների կողմից, դասախոսի հսկողությամբ կատարվում է գործնական աշխատանք պացիենտի կամ ֆանտոմային մոդելի վրա: